

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆԻՍ

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ի՞նչն են անվանում մեխանիկական շարժում:

- 1) Կամայական շարժումը:
- 2) Ժամանակի ընթացքում մարմնի վիճակի ամեն մի փոփոխությունը:
- 3) Մարմնի դիրքի փոփոխությունն այլ մարմինների կամ նրա մասերի դիրքերի փոփոխությունը միմյանց նկատմամբ:
- 4) Այլ մարմինների ազդեցությամբ տեղի ունեցող շարժումը:

Ո՞ր մեծությունն են անվանում ձանապարհ:

- 1) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող հատվածի երկարությունը:
- 2) Մարմնի շառավիղ-վեկտորի փոփոխության մոդուլը:
- 3) Հետագծի երկայնքով մարմնի անցած հեռավորությունը:
- 4) Մարմնի սկզբնական և վերջնական դիրքերը միացնող վեկտորը:

3 Մարմինն առանց սկզբնական արագության ազատ անկում է կատարում *հ* բարձրությունից: Որքա՞ն է մարմնի միջին արագությունը ամբողջ շարժման ընթացքում:

- 1) gh
- 2) \sqrt{gh}
- 3) $\sqrt{\frac{gh}{2}}$
- 4) $\sqrt{2gh}$

4 Ինչպե՞ս կշարժվի մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե ժամանակի որևէ պահից սկսած նրա վրա ազդող բոլոր ուժերի համազորք հավասարվի զրոյի:

- 1) Ակնթարթորեն կանգ կառնի:
- 2) Կշարունակի շարժվել այդ պահին ունեցած արագությամբ:
- 3) Կատարի հավասարաչափ դանդաղող շարժում:
- 4) Կշարունակի շարժվել նախկին արագացմամբ:

5 Ինչպե՞ս կփոխվի մարմնի արագացումը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե հաստատուն պահելով նրա վրա ազդող ուժերի համագործ, զանգվածը մեծացնենք 2 անգամ:

- 1) կփոքրանա 4 անգամ
- 2) կմեծանա 2 անգամ
- 3) կմեծանա 4 անգամ
- 4) կփոքրանա 2 անգամ

6 Ինչի՞ց է կախված զսպանակի կոշտությունը:

- 1) բոլոր պատասխանները սխալ են
- 2) դեֆորմացիայի չափից
- 3) առաձգականության ուժից
- 4) զսպանակի չափերից, ձևից և նյութի տեսակից

7 Ինչպե՞ս է փոխվում երկու համասեռ գնդերի գրավիտացիոն փոխազդեցության ուժը նրանց միջև հեռավորությունը երկու անգամ փոքրացնելիս:

- 1) փոքրանում է չորս անգամ
- 2) մեծանում է երկու անգամ
- 3) մեծանում է չորս անգամ
- 4) փոքրանում է երկու անգամ

8 Հորիզոնական ձանապարհով հաստատուն v արագությամբ շարժվող ավտոմեքենայի վրա ազդում է դիմադրության F ուժ: Որքա՞ն է ավտոմեքենայի շարժիչի հզորությունը:

- 1) 0
- 2) $2Fv$
- 3) Fv
- 4) $0,5Fv$

9

Մարմնի կինետիկ էներգիան E է, իսկ իմպուլսի մոդուլը՝ p : Որքա՞ն է մարմնի զանգվածը:

$$1) \ m = \frac{p^2}{2E}$$

$$2) \ m = \frac{E}{p}$$


$$3) \ m = 2Ep^2$$

$$4) \ m = \frac{2E}{p^2}$$

10

Համեմատել անոթի հեղուկի ճնշումներն A և B կետերում:


- 1) A կետում ճնշումը զրո է:
- 2) A կետում ճնշումն ավելի մեծ է, քան B կետում:
- 3) B կետում ճնշումն ավելի մեծ է, քան A կետում:
- 4) A և B կետերում ճնշումը նույնն է:



11

Թելից կախված բեռք ներդաշնակ տատանումներ է կատարում A և C դիրքերի միջև: Ո՞ր դիրքում բեռն ունի առավելագույն կինետիկ էներգիան:

- 1) բոլոր դիրքերում նույնն է
- 2) A դիրքում
- 3) B դիրքում
- 4) C դիրքում



12

Ո՞ր մեծությունն է բնութագրում ձայնի ուժգնությունը:

- 1) տատանումների լայնությը
- 2) տատանումների հաճախությունը
- 3) տարածման արագությունը
- 4) ալիքի երկարությունը

13

Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել մարմնում պարունակվող մոլեկուլների թիվը, եթե հայտնի են մարմնի m զանգվածը, M մոլային զանգվածը, N_u Ավոգադրոյի հաստատունը:

$$1) \frac{N_u}{mM}$$

$$2) \frac{mN_u}{M}$$

$$3) \frac{m}{MN_u}$$

$$4) \frac{MN_u}{m}$$

14


Ի՞նչ է բրունյան շարժումը:

- 1) փոքր մասնիկների անկանոն շարժում հեղուկի կամ զազի մոլեկուլների հարվածների հետևանքով
- 2) մոլեկուլների բախումներ
- 3) ջրի հոսքով պայմանավորված պինդ մասնիկների շարժում
- 4) նյութում մոլեկուլների անկանոն շարժում

15

Ինչպիսի՞ պրոցես է նկարագրում նկարում պատկերված գրաֆիկը:

- 1) ադիաբատ
- 2) իզոթերմ
- 3) իզոբար
- 4) իզոխոր



16

Ո՞րն է Շառլի օրենքն արտահայտող հավասարումը:

$$1) \frac{V_1}{V_2} = \frac{p_2}{p_1}$$

$$2) \frac{p_1}{p_2} = \frac{V_1}{V_2}$$

$$3) \frac{V_1}{V_2} = \frac{T_1}{T_2}$$

$$4) \frac{p_1}{p_2} = \frac{T_1}{T_2}$$

17 Հաստատուն p ճնշման պայմանում իդեալական գազն ընդարձակվում է V_1 -ից մինչև V_2 ծավալը: Ի՞նչ աշխատանք է կատարում գազը:

- 1) $A = \frac{V_1 + V_2}{2} p$
- 2) $A = p(V_2 - V_1)$
- 3) $A = p(V_1 - V_2)$
- 4) $A = p\sqrt{V_1 V_2}$

18 Զերմափոխանակության ո՞ր տեսակի դեպքում է տեղի ունենում նյութի տեղափոխություն:

- 1) կոնվեկցիայի և զերմահաղորդականության
- 2) զերմահաղորդականության
- 3) ձառագայթման
- 4) կոնվեկցիայի

19 Ի՞նչ միավորով է չափվում նյութի տեսակաբար զերմունակությունը միավորների ՄՀ-ում:


- 1) $1 \Omega/\text{Կ}$
- 2) 1Ω
- 3) $1 \Omega/\text{կգ}$
- 4) $1 \Omega/(\text{կգ}\text{Կ})$

20 Ինչպես է լիցքավորված մարմինը, եթե նրա մեջ կեկտրոնների թիվը գերազանցում է պրոտոնների թիվը:

- 1) հնարավոր է՝ լիցքավորված լինի ինչպես դրական, այնպես էլ բացասական լիցքով
- 2) դրական լիցքով
- 3) բացասական լիցքով
- 4) լիցքավորված չէ

21 Երկու անշարժ կետային լիցքերի էլեկտրաստատիկ փոխազդեցության ուժի մոդուլն F է: Որքա՞ն կլինի այն, եթե լիցքերից յուրաքանչյուրի մոդուլը փոքրացնենք n անգամ:

- 1) $n^2 F$
- 2) $\frac{F}{n^2}$
- 3) nF
- 4) $\frac{F}{n}$

22 Նկարում պատկերված է ժամանակի ինչ-որ պահին  էլեկտրոնի արագության ուղղությունը համասեռ էլեկտրաստատիկ դաշտում: Ինչպե՞ս է ուղղված էլեկտրոնի վրա  դաշտի ազդող ուժը:

- 1) \vec{v} -ին հակառակ ուղղությամբ
- 2) \vec{E} -ի ուղղությամբ
- 3) \vec{E} -ին հակառակ ուղղությամբ
- 4) \vec{v} -ի ուղղությամբ

23 Ո՞րն է հարթ կոնդենսատորի էլեկտրատևնակության ձիշտ բանաձևը:

- 1) $C = \frac{\epsilon_0 d}{S}$
- 2) $C = \frac{\epsilon S}{d}$
- 3) $C = \frac{\epsilon \epsilon_0 d}{S}$
- 4) $C = \frac{\epsilon \epsilon_0 S}{d}$


24 Ո՞ր բանաձևով է արտահայտվում Ohmի օրենքը շղթայի տեղամասի համար:

- 1) $I = \frac{\varepsilon}{R + r}$
- 2) $I = \frac{q}{t}$
- 3) $I = \frac{U}{R}$
- 4) $\varepsilon = \frac{A}{q}$

25

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի տեղամասի ընդհանուր դիմադրությունը:

- 1) 24Օմ
- 2) 2Օմ
- 3) 2,4Օմ
- 4) 10Օմ



26

Ի՞նչ ջերմաքանակ կանցատվի իրար զուգահեռ միացված երեք $R_1 = R_2 = R_3 = R$ հավասար դիմադրություններով շղթայի տեղամասում Δt ժամանակամիջոցում, եթե նրա ծայրերին կիրառված լարումը U է:

- 1) $\frac{3U^2}{R\Delta t}$
- 2) $\frac{3U^2}{R}\Delta t$
- 3) $\frac{U^2}{R}\Delta t$
- 4) $\frac{U^2}{3R}\Delta t$

27

Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Աղերի, թթուների, հիմքերի ջրային լուծույթները և աղերի հալույթները, որոնք օժտված են էլեկտրահաղորդականությամբ, կոչվում են էլեկտրոլիտներ:
- 2) Բոլոր հեղուկներն էլեկտրական հոսանքի հաղորդիչներ են:
- 3) Բոլոր հեղուկներն էլեկտրական հոսանքի անհաղորդիչներ են:
- 4) Հեղուկներն անվանում են նաև էլեկտրոլիտներ:

28

Ինչպե՞ս է փոխակում կիսահաղորդչի հաղորդականությունը այն լուսավորելիս:

- 1) կարող է մեծանալ կամ կփոքրանալ
- 2) մեծանում է
- 3) մնում է նույնը
- 4) փոքրանում է

29

Ինչպես են փոխազդում երկու գուգահեռ հոսանքակիր հաղորդիչները, եթե նրանցով անցնող հոսանքներն ունեն միևնույն ուղղությունը:

- 1) Կախված հոսանքի մեծությունից՝ հաղորդիչները կձգեն կամ կվանեն իրար:
- 2) Փոխազդեցության ուժը զրո է:
- 3) Հաղորդիչները ձգում են իրար:
- 4) Հաղորդիչները վանում են իրար:

30

Ի՞նչ ուղղություն ունի \vec{B} ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում \vec{v} արագությամբ շարժվող դրական լիցքի վրա ազդող Լորենցի ուժը, եթե \vec{v} և \vec{B} վեկտորների ուղղությունները հանդնկնում են:

- 1) $\vec{F} = 0$
- 2) համընկնում է \vec{B} -ի ուղղության հետ
- 3) հակառակ է \vec{B} -ի ուղղությանը
- 4) ուղղահայց է \vec{B} -ին

31

Ω^* կետում է ստացվում լույսի S կետային աղբյուրի պատկերը հարթ հայելում:

 $a \circ \quad \circ b$


- 1) պատկեր չի ստացվում
- 2) a
- 3) c
- 4) b

 $*S$

32

Լույսի ճառագայթն օդից ընկնում է ապակե կիսագնդին: Ω^* ն է ճառագայթի ճիշտ ընթացքը:

- 1) η
- 2) ω
- 3) ρ
- 4) q




33

Նկարում պատկերված լույսի ճառագայթը ե՞րբ ջրից դուրս
կգա օր:

- 1) Բոլոր պատասխանները սխալ են:
- 2) Միշտ դուրս կգա:
- 3) Երբեք դուրս չի գա:
- 4) Պատասխանը կախված է անկման անկյունից:


օդ



34

Բնչպիսի՞ն է AB առարկայի պատկերը հավաքող
բարակ ոսպնյակում:

- 1) կեղծ, փոքրացված, ուղիղ
- 2) իրական, մեծացված, շրջված
- 3) իրական, փոքրացված, շրջված
- 4) կեղծ, մեծացված, ուղիղ



35

Ստորև թվարկված էլեկտրամագնիսական ճառագայթումները դասավորեք ըստ
ալիքի երկարության աճի՝

1. ռենտգենյան ճառագայթում,
2. ենթակարմիր ճառագայթում,
3. ռադիոալիքներ:

- 1) 1, 2, 3:
- 2) 1, 3, 2:
- 3) 3, 2, 1:
- 4) 2, 1, 3:

36

Ո՞ր երևույթն է հաստատում լույսի ալիքային բնույթը:

- 1) լույսի ուղղագիծ տարածումը
- 2) լույսի անդրադարձումը
- 3) լույսի բեկումը
- 4) լույսի դիֆրակցիան

37

Ո՞րն պնդումն է հակասում հարաբերականության հատուկ տեսության կան-
խարույթներին:

- 1) Հաշվարկման բոլոր համակարգերում բնության կամայական երևույթ ընթա-
նում է նույն ձևով:
- 2) Հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում բնության կամայական
երևույթ ընթանում է նույն ձևով:
- 3) Վակուումում լույսի տարածման արագությունը կամայական իներցիալ
համակարգում ունի նույն արժեքը:
- 4) Վակուումում լույսի տարածման արագությունը կախված չէ լույսի աղբյուրի
շարժման արագությունից:

38

Ո՞րն է ν հաճախությամբ ֆուռնի իմպուլսի ճիշտ բանաձևը:

- 1) $\frac{hc}{\nu}$
- 2) $h\nu$
- 3) $\frac{h\nu}{c}$
- 4) $\frac{h\nu}{c^2}$

39

Ինչի՞ց է կախված լույսի ազդեցությամբ մետաղից պոկվող էլեկտրոնների ելքի
աշխատանքը:

- 1) մետաղի տեսակից
- 2) ընկնող լույսի հաճախությունից
- 3) ընկնող լույսի ուժգնությունից
- 4) պոկված էլեկտրոնների կինետիկ էներգիայից

40

${}_{\text{4}}^{\text{9}}Be$ - ի միջուկը α -մասնիկներով ճառագայթահարելիս առաջանում է ${}_{\text{6}}^{12}C$ միջուկ:
Ի՞նչ մասնիկ է առաջանում այդ դեպքում:

- 1) նեյտրին
- 2) նեյտրոն
- 3) էլեկտրոն
- 4) պրոտոն

41

Բարակ ոսպնյակից 0,6 մ հեռավորությամբ տեղադրված առարկայի պատկերը ստացվեց իրական և 2 անգամ խոշորացված: Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

42

Շարժվող վերելակի հատակին դրված 40 կգ զանգվածով բեռը վերելակի հատակին ձնշում է 600 Ն ուժով: Որքա՞ն է վերելակի արագացման մոդուլը: Ազատ անկման արագացումն ընդունել 10 մ/վ²:

43

Գազի ծավալն իզորար 2 անգամ մեծացնելիս կատարվեց 2000 Ω աշխատանք: Որքա՞ն է գազի սկզբնական ծավալը, եթե նրա ձնշումը $4 \cdot 10^5$ Ω է: Պատասխանը բազմապատկել 10^3 -ով:

44

60 սմ տրամագծով մետաղե գնդին հաղորդեցին 4 նԿ լիցք: Որքա՞ն է դաշտի լարվածությունը գնդի մակերևույթին: Կուլոնի օրենքում համեմատականության գործակիցը՝ $k = 9 \cdot 10^9 \text{ Nm}^2/\text{C}^2$:

- (45-46) Լուսի նվազագույն հաճախությունը, որի դեպքում մետաղից պոկվում են էլեկտրոններ, $2 \cdot 10^{14}$ Հց է: Պլանկի հաստատունն ընդունել $6,6 \cdot 10^{-34}$ ՋՎ, էլեկտրոնի լիցքի մոդուլը՝ $1,6 \cdot 10^{-19}$ Կլ:

45

Որքա՞ն է էլեկտրոնի ելքի աշխատանքն այդ մետաղի համար: Պատասխանը բազմապատկեք 10^{21} -ով:

46

Որքա՞ն է ֆոտոէլեկտրոնները կասեցնող լարումը, եթե մետաղի վրա ընկնում է $1,8 \cdot 10^{15}$ Հց հաճախությամբ ձառագայթում: Պատասխանը բազմապատկեք 10 -ով:

- (47-48) Մարդը 4 կգ զանգված ունեցող մարմինն ուղղաձիգ բարձրացնում է 2 մ/վ² հաստատուն արագացմամբ։ Օղի ռիմարրությունն անտեսել։ Ազատ անկման արագացումն ընդունել 10 մ/վ²։

47

Որքա՞ն է մարմնի վրա մարդու գործադրած ուժը։

48

Որքա՞ն աշխատանք է կատարում մարդը մարմինը 1,5 մ բարձրացնելիս։

(49-50) 0,5 կգ ջուրը 1000 Վտ հզորությամբ թեյնիկով անհրաժեշտ է տաքացնել 20°C -ից մինչև 80°C ջերմաստիճանը: Զրի տեսակարար ջերմունակությունը $4200 \Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$ է: Համարել, որ անջատված ողջ ջերմաքանակը ծախսվում է զրի տաքացման համար:

49

Որքա՞ն ջերմաքանակ է անհրաժեշտ ջուրը տաքացնելու համար: Պատասխանը բազմապատկել 10^{-3} -ով:

50

Որքա՞ն ժամանակ կպահանջվի զրի տաքացման համար:

(51-52) 240 Վ. լարման հաստատուն հոսանքի աղբյուրին միացված հարթ օդային կոնդենսատորի շրջադիրների հեռավորությունը 1 սմ-ից դարձրին 4 սմ:

51 Որքանո՞վ փոքրացավ շրջադիրների միջև լարվածությունը: Պատասխանը բազմապատկել 10^{-3} -ով:

52 Քանի՞ տոկոսով փոքրացավ կոնդենսատորի լիցքը:

(53-54) Բաց տատանողական կոնսուրում հոսանքի ուժը ժամանակից կախված փոխվում է $I = 0,4 \cos(8 \cdot 10^5 \pi t)$ բանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Լույսի արագությունը վակուումում $3 \cdot 10^8$ մ/վ է:

53 Ո՞ր հաճախության վրա է համալարված կոնսուրը: Դատասխանը բազմապատկեք 10^{-5} -ով:

54 Որքա՞ն է կոնսուրի ձառագայթած ալիքի երկարությունը վակուումում:

(55-57) Առարկան տեղադրված է ցրող բարակ ոսպնյակի և նրա կիզակետի միջև՝ կիզակետից 3,2 մ հեռավորությամբ։ Առարկայի կեղծ պատկերի հեռավորությունը նույն կիզակետից 5 մ է։

55

Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը։


56

Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից։ Պատասխանը բազմապատկեք 10-ով։

57

Որքա՞ն է ոսպնյակի խոշորացման մոդուլը։ Պատասխանը բազմապատկեք 10^3 -ով։

(58-60) Նկարում պատկերված է էլեկտրական շղթայում ամպերաչափը ցույց է տալիս 4 Ա: $R_1 = 5 \text{ Ом}$, $R_2 = 10 \text{ Ом}$, $R_3 = 20 \text{ Ом}$, $R_4 = 15 \text{ Ом}$: Ամպերաչափը համարել իդեալական:




58 Որքա՞ն է R_2 -ով անցնող հոսանքը:

59 Որքա՞ն է R_4 -ով անցնող հոսանքը:

60 Որքա՞ն է լարումը A և B կետերի միջև:

(61-64) Միասում իդեալական գազը 1 վիճակից 2 և 3 վիճակներին է անցնում երկու տարրեր պրոցեսներով: Գազը 1 վիճակից 2-ին է անցնում իզոբար ընդարձակվելով, որի ընթացքում ծավալը մեծանում է չորս անգամ: 1 վիճակից 3 վիճակ ընթացող պրոցեսի գրաֆիկը ուղիղ գիծ է, որի շարունակությունը անցնում է P-V կոորդինատային համակարգի սկզբնակետով: 2 և 3 վիճակները գտնվում են նույն իզոթերմի վրա:



61 Որքա՞ն է գազի կատարած աշխատանքն իզոբար ընդարձակվելիս:

62 Որքա՞ն է գազի Ճնշումը 3-րդ վիճակում: Պատասխանը բազմապատկել 10^{-4} -ով:

63 Որքա՞ն է գազի կատարած աշխատանքը 1-3 պրոցեսի ընթացքում:

64

Որքա՞ն է զազին հաղորդած շերմաքանակը 1-3 պրոցեսի ընթացքում:

(65-68) Գնդիկն առանց սկզբնական արագության ազատ անկում է կատարում $H = 40$ մ բարձրությունից: Գնդիկի ճանապարհին, գետնից $H/2$ բարձրությամբ, հորիզոնի նկատմամբ 45° անկյան տակ դրված է հարթակ, որից գնդիկն անդրադառնում է բացարձակ առաձգական հարվածի հետևանքով: Ազատ անկման արագացումն ընդունել 10 մ/վ²:

65

Ի՞նչ արագությամբ գնդիկը կանդրադառնա հարթակից:

66 Շարժումն սկսելուց որքա՞ն ժամանակ անց գնդիկը կհասնի գետին:

67 Որքա՞ն է գնդիկի տեղափոխությունը հորիզոնական ուղղությամբ:

68 Որքա՞ն է գնդիկի արագությունը գետին հարվածելու պահին: Ընդունել $\sqrt{2} = 1,4$:

69

Հաստատուն զանգվածով իդեալական գազն իզորար ընդարձակվում է:
Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Գազի խտությունը փոքրանում է:
- 2) Գազի մոլեկուլների միջին կինետիկ էներգիան փոքրանում է:
- 3) Գազի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը մեծանում է:
- 4) Գազի ներքին էներգիան մեծանում է:
- 5) Պրոցեսի ընթացքում գազը կատարում է բացասական աշխատանք:
- 6) Այդ պրոցեսը հնարավոր է, եթե գազին դրսից հաղորդենք ջերմաքանակ:

70

Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Մեխանիկական ալիքը պայմանավորված է միջավայրում ծագող առաձգականության ուժերով:
- 2) Մեխանիկական ալիքները լինում են լայնական և երկայնական:
- 3) Մեխանիկական ալիքները էներգիա են տեղափոխում:
- 4) Ներդաշնակ մեխանիկական ալիքները նյութ են տեղափոխում:
- 5) Մեխանիկական ալիքները տարածվում են պինդ, հեղուկ, գազային միջավայրերում և վակուումում:
- 6) Մեխանիկական ալիքի տարածման արագությունը հավասար է ալիքի երկարության և հաճախության արտադրյալին: